

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)



Անապահով ընտանիքները և սոցիալական ծառայությունները Հայաստանում

տնային տնտեսությունների ընտրանքային վիճակագրական
հետազոտության գեկույց

Երևան 2006

Անապահով ընտանիքները և սոցիալական ծառայությունները Հայաստանում, ՏՀԿ, 2006

Poor Families and Social Transfers in Armenia, EDRC, 2006

info@edrc.am, www.edrc.am

Հետազոտական հիմնական թիմը՝

Մուշեղ Թումասյան՝ հետազոտության ղեկավար

Գագիկ Թորոսյան՝ Տ.Գ.Թ., հետազոտության համակարգող

Գենադի Թերզիկյան՝ Մ.Գ.Թ., դոցենտ, մաթվիճակագիր

Ելենա Մանուկյան՝ Տ.Գ.Թ., վիճակագիր-վերլուծաբան

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը շնորհակալություն է հայտնում խորհրդատվություն իրականացրած և Հետազոտական հիմնական թիմին աջակցություն ցուցաբերած անձանց և մասնագետներին:

Բովանդակություն

Նախաբան	4
Ա. Հետազոտության նախագծումը և իրականացումը	5
Նպատակը	5
Գլխավոր համակցության ստրատիֆիկացիան	6
Ընտրանքի ձևավորումը	7
Հարցաթերթը	8
Հետազոտության կառավարումը և վերստուգումը	8
Մեթոմները կամ չկայացած հարցազրույցները	9
Ստացված արդյունքների որակը և համադրելիությունը	10
Բ. Հետազոտության հիմնական արդյունքները	11
Տնային տնտեսությունների չափը և կազմը	11
Աղքատության զգացումը և կարիքները	15
Սոցիալական ծառայությունները	17
Ընտանեկան նպաստի համակարգը	19
Հավելված 1. Համընդհանուր հետազոտություն վիճակագրական տվյալներ	22
Բաժին Ա. Հիմնական ժողովրդագրական պատկերը	23
Բաժին Բ. Կրթությունը և զբաղվածությունը	25
Բաժին Գ. Առողջապահությունը	27
Բաժին Դ. Բնակչության բնակարանային պայմանները և կոմունալ հարմարությունները	27
Բաժին Ե. Ընտանեկան նպաստների համակարգը	29
Բաժին Զ. Գյուղատնտեսությունը	31
Հավելված 2. Նպաստառու ընտանիքների նպատակային հետազոտություն վիճակագրական տվյալներ	33
Բաժին Ա. Հիմնական ժողովրդագրական պատկերը	34
Բաժին Բ. Կրթությունը և զբաղվածությունը	36
Բաժին Գ. Առողջապահությունը	38
Բաժին Դ. Բնակչության բնակարանային պայմանները և կոմունալ հարմարությունները	39
Բաժին Ե. Ընտանեկան նպաստների համակարգը	40
Բաժին Զ. Գյուղատնտեսությունը	41

Նախաբան

«Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը» ոչ առևտրային ոչ քաղաքական անկախ հետազոտական ինստիտուտ է, որն իր կուտակած շուրջ վեցամյա հետազոտական փորձառության և կարողությունների արդյունքում այսօր մասնագիտանում է միջազգային չափանիշներին համադրելի, բարձրորակ հետազոտությունների իրականացման և հանրային քաղաքականությունների վերլուծության ծրագրերի մեջ¹:

ՏՀԿ-ն Համաշխարհային բանկի Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատվերով 2006 թվականին իրականացրեց «Տնային տնտեսությունների հետազոտության» ծրագիրը: Ծրագրի ընդհանուր նպատակն էր օգնել մեծացնել Հայաստանում սոցիալական աջակցության, մասնավորապես, ընտանեկան նպաստի հասցեականությունը, ինչպես նաև սոցիալական ծառայությունների մատչելիությունը: Ծրագրի կոնկրետ նպատակներն (խնդիրները) էին՝ գնահատել տնային տնտեսությունների կարիքները և տրամադրվող սոցիալական ծառայությունները, սահմանել վերջինների առաջնահերթությունները, մշակել սոցիալական աջակցության այլընտրանքային ձևեր, ճշգրտել ընտանիքների անապահովության գնահատման բանաձևը:

Ծրագրի իրականացման համար, առաջնորդվելով տեխնիկական հանձնարարականով, ուսումնասիրվեց և վերլուծվեց առկա տեղեկատվությունը, իրականացվեցին տնային տնտեսությունների ընտրանքային վիճակագրական հետազոտություններ, ամփոփվեցին և վերլուծվեցին ստացված տվյալները և մշակվեցին վերլուծական զեկույցներ: Մասնավորապես, Ծրագրի արդյունքում.

- իրականացվեց Հանրապետության (և հինգ ստրատաների) մակարդակով ներկայացուցչական վիճակագրական հետազոտություն և ստեղծվեց 3800 տնային տնտեսությունների տվյալների բազա,
- իրականացվեց Հանրապետությունում ընտանեկան նպաստներ ստացող տնային տնտեսությունների (և հինգ ստրատաների) մակարդակով ներկայացուցչական վիճակագրական հետազոտություն և ստեղծվեց 700 տնային տնտեսությունների տվյալների բազա,
- մշակվեց «Սոցիալական աջակցության հասցեականության բարելավումը Հայաստանում» քաղաքականության առաջարկների զեկույցը,
- մշակվեց «Անապահով ընտանիքները և սոցիալական ծառայությունները Հայաստանում» տնային տնտեսությունների ընտրանքային վիճակագրական հետազոտության սույն զեկույցը:

Ընդհանուր առմամբ, ստացված արդյունքները չափազանց օգտակար կլինեն նմանատիպ կամ այլ հասարակագիտական հետազոտությունների և հանրային քաղաքականությունների հետագա բարելավման համար: Դրա երաշխիքն է ստացված արդյունքների բարձր որակը: Տվյալների բազաները պարունակում են Հայաստանի տնային տնտեսությունների վերաբերյալ բազմաթիվ սոցիալ-դեմոգրաֆիական և տնտեսական տեղեկատվություն, որը կարող է հետագա բազմաշերտ վերլուծությունների ենթարկվել:

Մշակված քաղաքականությունների առաջարկների զեկույցը, որը, որպես Ծրագրի վերջնական հաշվետվության բաղադրիչ, սույն զեկույցին զուգահեռ ներկայացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, տալիս է սոցիալական ծառայությունների, մասնավորապես, ընտանեկան նպաստների համակարգի արդյունավետության հստակ գնահատականներ և բարելավման կոնկրետ առաջարկներ:

«Անապահով ընտանիքները և սոցիալական ծառայությունները Հայաստանում» տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտության վիճակագրական սույն զեկույցը նպատակ ունի ներկայացնել հետազոտության մեթոդաբանությունը և ստացված հիմնական արդյունքները: Չեկույցին կցված են վիճակագրական հավելվածներ՝ տեղեկատվության հետագա վերլուծությունները և արդյունքներն առավել հասանելի դարձնելու համար: Չեկույցին կից՝ լազերային կրիչով, ներկայացվում են հետազոտության հարցաթերթը և SPSS ծրագրային փաթեթով տվյալների վերջնական մշակված բազաները:

¹ Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի մասին տե՛ս www.edrc.am

Ա. Հետազոտության նախագծումը և իրականացումը

Նպատակը

Տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտություններն աղքատության և սոցիալ-տնտեսական պատկերի գնահատման կարևոր գործիքներից են, որոնք կարող են հիմք ծառայել նաև վարվող քաղաքականությունների գնահատման և դրանց բարելավման ուղղությունների մշակման համար: Հայաստանում տնային տնտեսությունների կենսամակարդակի ուսումնասիրություններին ուղղված ընտրանքային վիճակագրական հետազոտությունների իրականացման հիմքերը դրվել են դեռևս 1996-ին՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից: Այս ընթացքում ՀՀ ԱՎԾ-ն մինչ օրս իրականացրել է 6 հետազոտություն, որոնք տարեցտարի, նաև միջազգային փորձագետների աջակցությամբ, կատարելագործվել են՝ աստիճանաբար համադրելի դառնալով զարգացած երկրների պրակտիկային:

Այնուամենայնիվ, յուրաքանչյուր հետազոտություն ունի իր խնդիրների շրջանակը և նպատակադրումը, ուստի ամեն կոնկրետ խնդրի լուծում կարող է պահանջել համապատասխան (առանձնահատուկ) տեղեկատվության ձեռքբերմանն ուղղված հետազոտություններ: Մյուս կողմից տարբեր մասնագիտական կառույցների կողմից որակյալ վիճակագրական հետազոտությունների իրականացումը հնարավորություն է ստեղծում ապահովել երկրում տեղեկատվության բազմազանություն և այլընտրանքների հնարավորություն, որը կնպաստի իրավիճակի առավել բազմակողմանի և խորը գնահատմանը և արդյունքում՝ քաղաքականությունների բարելավմանը:

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը 2006 թվականի մայիս-հունիս ամիսների ընթացքում իրականացրեց Հայաստանի տնային տնտեսությունների ընտրանքային վիճակագրական հետազոտություն: Հետազոտության (դաշտային աշխատանքների) նպատակն էր ստանալ տվյալ պահի դրությամբ Հայաստանի բոլոր տնային տնտեսությունների, ինչպես նաև սոցիալական աջակցության համակարգից փաստացի օգտվող տնային տնտեսությունների սոցիալական, դեմոգրաֆիական և տնտեսական իրավիճակի ընդհանուր պատկերը, կամ հավաքագրել այնպիսի տեղեկատվություն, որը կնպաստի սոցիալական աջակցության հասցեականության և սոցիալական ծառայությունների մատչելիության բարձրացմանը: Ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքում հարկավոր էր՝ ա) գնահատել շահառուների առկա կարիքները, բ) ստուգել տրամադրվող հանրային սոցիալական ծառայությունների համապատասխանությունն այդ կարիքներին, գ) գնահատել այդ ծառայությունների հասցեականության աստիճանը և դ) ստանալ գնահատականներ և տեղեկատվություն՝ սոցիալական աջակցության արդյունավետության բարձրացման համար: Սրանց համար անհրաժեշտ էր ուսումնասիրել սոցիալական ծառայություններից փաստացի օգտվող տնային տնտեսություններին, ստանալ տվյալներ և վիճակագրություն այն մասին, թե դրանց ո՞ր մասն են հանդիսանում ծրագրերի իրական շահառուները, ի՞նչ կարիքներ ունեն դրանք, տրամադրվող ծառայությունները որքանով են համապատասխանում շահառուների կարիքներին: Մյուս կողմից, խնդիր կար պարզել, թե որքանով են սոցիալական աջակցության կարիք ունեցողները ներգրավված սոցիալական ծրագրերում, կամ, այլ կերպ ասած՝ որքա՞ն շահառուներ են դուրս մնում սոցիալական ծրագրերից:

Հետևաբար, ելնելով հետազոտության առջև դրված այս խնդիրներից, հետազոտությունը նախագծվել է երկու առանձին մասով՝ մեկը ընդգրկում է Հայաստանի բոլոր տնային տնտեսությունների ընտրանքային համակցությունը (այսուհետ՝ նաև Համընդհանուր հետազոտություն): Հետազոտության երկրորդ մասն ընդգրկում է Հայաստանում ամենամեծ սոցիալական ծառայության՝ ընտանեկան նպաստի համակարգով օգնություն ստացող տնային տնտեսությունների ընտրանքային համակցությունը (այսուհետ՝ նաև Նպատակային

հետազոտություն): Համընդհանուր հետազոտության ընտրանքային ծավալը սահմանվել է 3800 տնային տնտեսություն, որը կազմում է գլխավոր համակցության 4.9 պրոմիլը: Ընտրանքի նշված ծավալն ապահովում է, որպեսզի նպաստառուների վերաբերյալ տվյալների առավելագույն սպասվող ստանդարտ սխալը կազմի 0.6 տոկոս, իսկ բոլոր տնային տնտեսություններին վերաբերող պատասխանների դեպքում առավելագույն ստանդարտ սխալը՝ 0.81 տոկոս: Նպատակային հետազոտության համար ընտրանքի չափը սահմանվել է 700 տնային տնտեսություն, որը կազմում է գլխավոր համակցության 5.4 պրոմիլը:

Գլխավոր համակցության ստրատիֆիկացիան

Հետազոտության ներկայացուցչականության ապահովման և որակյալ արդյունքների ստացման առումով կարևորվում է գլխավոր համակցության ստրատիֆիկացիան: Համընդհանուր հետազոտության համար գլխավոր համակցությունը Հայաստանի Հանրապետության բոլոր տնային տնտեսություններն են, իսկ նպատակային հետազոտության համար՝ Ընտանեկան նպաստների համակարգում հաշվառված և 2006-ի ապրիլի դրությամբ ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունները:

Գլխավոր համակցության ստրատաների տարանջատման համար հիմք են ընդունվել Հայաստանի համայնքների այն առանձնահատկությունները, որոնք, ենթադրվում էր, որ ուժեղ ազդեցություն ունեն տնային տնտեսությունների կենսամակարդակի և սոցիալ-տնտեսական կյանքի վրա: Ստրատաների որոշման հիմքում դրված էին շուկաների մեծության, սոցիալական և տնտեսական ենթակառուցների առկայության կամ մատչելիության խնդիրները: Այս առումով Հայաստանը բաժանվել է 5 ստրատաների՝ 1. Երևան, 2. Մեծ քաղաքներ, 3. Փոքր և միջին քաղաքներ, 4. Մեծ և միջին գյուղեր, 5. Փոքր գյուղեր:

Մեծ քաղաքներ են համարվել 100 հազարից ավելի բնակչություն ունեցող Գյումրի և Վանաձոր քաղաքները: Հանրապետության հաջորդ մեծ քաղաքը (Երևանից հետո չորրորդ) արդեն գրեթե երկու անգամ փոքր է Վանաձորից: Այդ իսկ պատճառով մնացած քաղաքները ստրատավորվել են առանձին՝ «Փոքր և միջին քաղաքներ» (թվով 45 համայնք):

«Փոքր գյուղեր» են համարվել մինչև 500 մշտական բնակիչ ունեցող գյուղական համայնքները: Վիճակագրության համար հիմք է ընդունվել ՀՀ ԱՎԾ 2001 թվականի մարդահամարի մշտական բնակչության թվաքանակն ըստ Հանրապետության համայնքների:

Նպատակային հետազոտության դեպքում նույնպես գլխավոր համակցությունը բաժանվել է վերոնշյալ նույն ստրատաների: Ստորև բերվում է Ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տվյալների բազայում հաշվառված և փաստացի նպաստ ստացող ընտանիքների թվաքանակը, դրանց տոկոսային հարաբերություններն ընդամենը ընտանիքների նկատմամբ՝ ըստ ստրատաների:

	Ընդամենը ընտանիքներ	Հաշվառված ընտանիքներ		Նպաստառու ընտանիքներ		
		հազար հատ	հազար հատ	տոկոս բոլորի նկատմամբ	հազար հատ	տոկոս բոլորի նկատմամբ
Ստրատա 1	Երևան	279	38	14	25	9
Ստրատա 2	Մեծ քաղաքներ	65	34	52	26	39
Ստրատա 3	Փոքր և միջին քաղաքներ	179	49	28	34	19
Ստրատա 4	Մեծ և միջին գյուղեր	241	60	25	40	17
Ստրատա 5	Փոքր գյուղեր	17	7	41	4	26
Ընդամենը Հայաստան		781	188	24.1	129	16.5

Աղյուսակից ակնառու է դառնում, որ հետազոտության խմբավորումը (ստրատիֆիկացիան) խիստ տրամաբանական է: Խմբավորման հիմքում դրված այն վարկածը, որ ստրատաները միմյանցից տարբերվում են դրանցում բնակվող ընտանիքների բարեկեցությամբ՝

ապացուցվում է: Այսպես, իրենց անապահով համարող կամ սոցիալական աջակցության կարիք ունեցող տնային տնտեսությունները Երևանում կազմում են 14 տոկոս, իսկ Մեծ քաղաքներում՝ 52 տոկոս, Փոքր գյուղերում՝ 41 տոկոս, Հանրապետության միջին 25 տոկոսի դիմաց: Նույնը կարելի է նկատել նպաստ ստացողների համար: Հանրապետական միջինից Էապես տարբերվում են 1-ին, 2-րդ և 5-րդ ստրատաները՝ Երևանում նպաստ են ստանում ընտանիքների 9 տոկոսը, Մեծ քաղաքներում՝ շուրջ 40 տոկոսը, իսկ Փոքր գյուղերում՝ 26 տոկոսը:

Խմբավորումը հիմնավորելու համար այս վիճակագրությունը բավարար է, և կարելի է պնդել, որ ներկայացված խմբերը (ստրատաները) առանձին հետազոտության կարիք ունեն: Կամ ստրատիֆիկացիան կբարձրացնի հետազոտության արդյունքների որակը:

Ընտրանքի ձևավորումը

Ընտրանքի ձևավորման համար հիմք է ընդունվել գլխավոր համակցության ներկայացված 5 ստրատաներում տնային տնտեսությունների թվաքանակը: Ընտրանքի կառուցման առաջին փուլում հետազոտությունների ընտրանքային համակցությունը (3800 տնային տնտեսություն՝ համընդհանուր հետազոտության համար և 700 տնային տնտեսություն՝ նպատակային հետազոտության համար) համամասնորեն բաշխվել է ըստ վերոնշյալ ստրատաների:

	Գլխավոր համակցություն*		Ընտրանքային համակցություն**	
	Համընդհանուր հետազոտություն	Նպատակային հետազոտություն	Համընդհանուր հետազոտություն	Նպատակային հետազոտություն
Ընդամենը տնային տնտեսություններ	781	129	3,800	700
Երևան	279	25	1,359	136
Այլ քաղաքներ	244	60	1,187	321
Մեծ քաղաքներ	65	26	315	139
Փոքր և միջին քաղաքներ	179	34	872	182
Գյուղեր	258	44	1,254	243
Մեծ և միջին գյուղեր	241	40	1,170	219
Փոքր գյուղեր	17	4	84	24

* հազար տնային տնտեսություն

** փաստացի հետազոտված տնային տնտեսությունների քանակն է

Ընտրանքի կառուցման երկրորդ փուլում յուրաքանչյուր ստրատայի համար որոշվել են ընտրանքի նախնական միավորները և կատարվել է դրանցում տնային տնտեսությունների պատահական ընտրություն: Մասնավորապես, 1-ին ստրատայում (ք. Երևան) ընտրանքի նախնական միավորների թիվը 12-ն է (համապատասխան թաղային համայնքների քանակին), իսկ դրանցից յուրաքանչյուրում տնային տնտեսությունների քանակն ուղիղ համեմատական է գլխավոր համակցության մեջ ընտրանքի նախնական միավորի ունեցած կշռին: 2-րդ ստրատայում միավորները երկուսն են, և տնային տնտեսությունների ընտրանքը բաշխված է նույնպես համամասնորեն՝ ըստ գլխավոր համակցության մեջ դրանց (Գյումրիի և Վանաձորի) ունեցած կշիռների:

Մնացած ստրատաներում ընտրանքի նախնական միավորների ընտրությունը կատարվում էր պատահական ընտրանքի եղանակով՝ օգտագործելով հավանականության կշիռները: Ընդ որում 3-րդ և 4-րդ ստրատաներում մեկ համայնքում ընտրված տնային տնտեսությունների նվազագույն թվաքանակի համար սահմանվել են շեմեր՝ Մեծ և միջին գյուղերում ոչ պակաս քան 10, իսկ փոքր գյուղերում՝ ոչ պակաս քան 5 տնային տնտեսություն:

Ընտրանքի մեթոդը դիտարկենք նաև 3-րդ ստրատայի օրինակով: Այս ստրատայի 45 քաղաքային համայնքները դասակարգվել են ըստ դրանցում տնային տնտեսությունների

քանակի նվազման կարգի, որից հետո դրանցից յուրաքանչյուրին տրվել է հավանականության կշիռ, որը համապատասխանում է տնային տնտեսությունների քանակով տվյալ համայնքի ստրատայում ունեցած տեսակարար կշիռն: Այնուհետ, 0-1 միջակայքում հավասարաչափ բաշխված պատահական թվերի ցուցիչով, հաշվի առնելով հավանական կշիռները, ձևավորվում է պահանջվող ծավալի ընտրանքը ստրատայում՝ ըստ պատահականորեն ընտրված համայնքների, որից հետո կատարվում է տնային տնտեսությունների պատահական ընտրություն:

Արդյունքում, ընտրանքը տարածված է ողջ Հայաստանով՝ ընդգրկելով 108 գյուղական, 40 քաղաքային և Երևանի 12 թաղային համայնքները: Ընտրված հասցեների հետազոտությունը նույնպես վկայում է, որ մեծ համայնքներում չի խնայվել հարցազրուցավարների աշխատանքը՝ ապահովելով բնակավայրում ցրվածության առավելագույն տրամաբանական աստիճան: Այսպիսով, իրականացված հետազոտությունը Հայաստանում աննախադեպ է ընտրանքի ծավալի համեմատ բնակավայրերի ընդգրկման և ցրվածության առումով, որն իր դրական դրսևորումն է թողել արդյունքների որակի վրա:

ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՅ և ՏՉՀԿ տնային տնտեսությունների համընդհանուր հետազոտությունում ընդգրկված գյուղական և քաղաքային բնակավայրերի քանակի համեմատականը՝ ըստ ընտրանքի ծավալի

	1996	1998/99	2001	2002	2003	2004	2006
	ՀՀ ԱՎԾ						ՏՉՀԿ
Հետազոտված տնային տնտեսությունների քանակը	4920	3600	4037	4634	4641	6816	3800
Ընտրանքում ընդգրկված քաղաքային բնակավայրերի քանակը	28	33	19	14	17	43	41*
Ընտրանքում ընդգրկված գյուղական բնակավայրերի քանակը	100	71	28	30	20	216	108
Ընտրանքում ընդգրկված ընդամենը բնակավայրերի քանակը	128	104	47	44	37	259	149

** Երևան քաղաքն իր բոլոր 12 թաղային համայնքներով հանդերձ ներառված է որպես մեկ բնակավայր:*

Հարցաթերթը

Թե՛ Համընդհանուր և թե՛ Նպատակային հետազոտությունների համար կիրառվել է նույն հարցաթերթը: Հարցաթերթի նախագծումը սկսվել է դաշտային հետազոտության նկատմամբ պահանջների հստակեցումից և ակնկալվող արդյունքների սահմանումից հետո, և այն վերամշակվել և վերջնական տեսքի է բերվել փորձնական հետազոտության իրականացման և արդյունքների ամփոփումից հետո:

Հարցաթերթի մշակման հիմքում, պատվիրատուի կողմից ստեղծված մասնագիտական աշխատանքային խմբի առաջարկով, դրվել են ՀՀ ԱՎԾ «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության» և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Արագածոտնի մարզի տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական վիճակի ուսումնասիրության» հարցաթերթերը: Հարցաթերթը տրված է սույն հաշվետվությանը կցվող լազերային կրիչում՝ հետազոտության տվյալների բազաների հետ մեկտեղ (SPSS ծրագրային միջավայրում):

Հետազոտության կառավարումը և վերստուգումը

Թեև գլխավոր համակցությունը տարանջատվել էր ըստ նշված 5 ստրատաների, սակայն հետազոտության կառավարումը՝ դաշտային աշխատանքների պլանավորում, հարցազրուցավարների հրահանգավորում, ստուգում և վերստուգում, իրականացվել է ըստ մարզերի: Յուրաքանչյուր մարզում, հետազոտության ծավալին համապատասխան, ընտրվել

են հարցազրուցավարներ, որոնք հրահանգավորվել են կազմակերպված սեմինարների ընթացքում, որից հետո ընթացիկ հրահանգավորումը և հարցերի պարզաբանումներն իրականացրել են մարզային պատասխանատուները:

Յուրաքանչյուր մարզում, հետազոտության ընթացիկ կառավարման, հարցազրուցավարների հետ աշխատանքի և դաշտային աշխատանքների և ստացված արդյունքների ստուգման համար նշանակվել է մեկ պատասխանատու: Մարզային պատասխանատուներն առանձին հրահանգավորվել են: Ընդհանուր առմամբ հետազոտությանը մասնակցել են ավելի քան 120 հարցազրուցավար և 11 մարզային պատասխանատու:

Դաշտային աշխատանքների ստուգումն իրականացվել է նաև հետազոտության գլխավոր գրասենյակի կողմից՝ 1. պատահական ընտրանքային ստուգման և 2. տվյալների տրամաբանական ստուգման և համադրման մոտեցումներով: Առաջին դեպքում կատարվել են պատահական ընտրանքային այցելություններ: Երկրորդ դեպքում ստացված նախնական արդյունքները համադրվել են Ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տվյալների բազայի և/կամ այլ հնարավոր առկա տեղեկատվության հետ, ենթարկվել են նախնական տրամաբանական ստուգման, որի արդյունքում առանձնացված հասցեներում կատարվել են ստուգայցեր: Հայտնաբերված թերացումների և հարցազրույցների անցկացման խախտումների դեպքերում տվյալ համայնքներում ամբողջապես կրկնվել է հետազոտությունը: Ստուգման և վերստուգման ինտենսիվությունը և արդյունավետությունը թույլ են տալիս վստահորեն պնդել, որ դաշտային աշխատանքներն իրականացվել են մշակված մեթոդոլոգիային համապատասխան:

Մեթոդները կամ չկայացած հարցազրույցները

Մեթոման կամ այլ պատճառներով առաջնային հասցեում հարցազրույցի անցկացման անհնարինության պարագայում, մեթոդական ցուցումներին համաձայն, տվյալ հասցեն փոխարինվել է հայելանման սկզբունքով կառուցված ռեգրվային հասցեների ցանկից մեկ այլ հասցեով: Արդյունքում, ընտրանքի պլանավորված չափը՝ ըստ ստրատանների, չի խախտվել:

Մեթոմների դեպքերը մարզերում շատ չեն, սակայն բավականին շատ են Երևանում: Ստորև ներկայացվում է հետազոտության ընթացքում արձանագրված մեթոմների և այլ պատճառներով չիրականացված հարցազրույցների վիճակագրությունը Երևան քաղաքում՝ ըստ թաղային համայնքների:

Երևան քաղաքում չկայացած հարցազրույցներն ըստ պատճառների

	Համայնք	Տանը չեն հանդիպել (փակ դուռ)	Մեթոմ	Հասցեն օգտագործվել է այլ նպատակով	Այլ պատճառներ	Ընդամենը չկայացած հարցազրույցներ	Տոկոս ընտրանքի նկատմամբ
1	Կենտրոն	31	11	10	4	56	34.1%
2	Արաբկիր	33	24	7	5	69	42.9%
3	Դավթաշեն	28	7	1	0	36	31.3%
4	Չեյթուն	17	4	2	4	27	17.8%
5	Ավան	3	1	1	0	5	11.6%
6	Աջափնյակ	19	7	3	2	31	36.9%
7	Մալաթիա	15	9	8	2	34	19.9%
8	Շենգավիթ	17	8	3	0	28	15.1%
9	Էրեբունի	53	21	8	0	82	42.9%
10	Նոր Նորք	42	7	6	0	55	25.5%
11	Նորք-Մարաշ	1	0	0	0	1	20.0%
12	Նուբարաշեն	2	0	0	0	2	40.0%
Ընդամենը		261	99	49	17	426	28.5%

Ստացված արդյունքների որակը և համադրելիությունը

Ստացված արդյունքների համադրումն այլ հետազոտությունների և պաշտոնական վիճակագրության հետ խոսում է հետազոտության որակի մասին: Այսպես, հետազոտությամբ ստացված մի շարք ցուցանիշներ ամբողջությամբ համընկնում են պաշտոնական վիճակագրության հետ, օրինակ՝ տնային տնտեսությունների անդամների միջին թվաքանակը (4.1 մարդ), ծերերի տեսակարար կշիռը բնակչության մեջ (13.1 տոկոս), հաշմանդամների տեսակարար կշիռը (4.3՝ պաշտոնական 4.4-ի դիմաց) և այլն: Պաշտոնական վիճակագրությունից հնարավոր շեղումները մյուս ցուցանիշների գծով տրամաբանության շրջանակներում են և հանդիսանում են տվյալ ժամանակահատվածի համար վիճակագրության լիարժեք այլընտրանք: Ստորև բերվող աղյուսակներում տրվում են 2001 և 2004 թվականների համար պաշտոնական տվյալները և հետազոտությամբ 2006 թվականի համար ստացված տվյալները:

Տնային տնտեսությունների համեմատական բաշխումն ըստ անդամների քանակի, տոկոս ընդամենի նկատմամբ

<i>Տնային տնտեսությունների կազմը</i>	Ըստ ՀՀ ԱՎԾ 1998/99թթ. հետազոտության	Ըստ ՀՀ ԱՎԾ 2004թ. հետազոտության	Ըստ S234 2006թ. «Համընդհանուր» հետազոտության
Մեկ անդամ ունեցող	8.4	10.9	9.3
Երկու անդամ ունեցող	13.1	16.5	14.3
Երեք անդամ ունեցող	12.2	14.6	14.1
Չորս անդամ ունեցող	21.9	21.6	21.7
Հինգ անդամ ունեցող	20.1	17.2	18.7
Վեց և ավելի անդամ ունեցող	24.6	19.2	22.0

Տնային տնտեսությունների համեմատական բաշխումն ըստ երեխաների քանակի, տոկոս ընդամենի նկատմամբ

<i>Տնային տնտեսությունների կազմը</i>	Ըստ 2001թ. մարդահամարի	Ըստ ՀՀ ԱՎԾ 2004թ. հետազոտության	Ըստ S234 2006թ. «Համընդհանուր» հետազոտության
Մեկ երեխա ունեցող	20.2	22.2	22.0
Երկու երեխա ունեցող	23.3	22.9	23.1
Երեք երեխա ունեցող	9.4	7.2	7.8
Չորս երեխա ունեցող	2.3	1.8	1.9
Հինգ և ավելի երեխա ունեցող	0.8	0.6	0.3
Երեխա չունեցող	44.0	45.3	44.8


Բ. Հետազոտության հիմնական արդյունքները

Սույն բաժնում ներկայացվում են S234 տնային տնտեսությունների հետազոտության հիմնական արդյունքների հակիրճ վերլուծությունները՝ համեմատելով «Համընդհանուր հետազոտության» և «Նպատակային հետազոտության» արդյունքները: Այսինքն՝ վերլուծությունները վերաբերվում են Հայաստանի բոլոր տնային տնտեսություններին (բնակչությանը) և/կամ ընտանեկան նպաստի համակարգով նպաստ ստացող ընտանիքներին, այսուհետ՝ Նպաստառուներ: Վերլուծությունների համար կիրառվում են հետազոտության ստրատաները, այն է՝ 1. Երևան, 2. Մեծ քաղաքներ (ներառում է Գյումրի և Վանաձոր քաղաքները), 3. Փոքր և միջին քաղաքներ (ներառում է Հանրապետության մյուս բոլոր քաղաքային համայնքները), 4. Մեծ և միջին գյուղեր (500-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերը) և 5. Փոքր գյուղեր (մինչև 500 բնակիչ ունեցող գյուղերը):

Տնային տնտեսությունների չափը և կազմը

2006-ի տարեսկզբի դրությամբ Հայաստանի մշտական բնակչությունը կազմել է 3.2 միլիոն մարդ, որոնք բնակվել են 779 հազար տնային տնտեսություններում²: Տնային տնտեսությունների 16.5 տոկոսը, կամ 129 հազար ընտանիք³ ստանում են ընտանեկան նպաստներ: Նպաստառուների թվաքանակն ընդհանուր տնային տնտեսությունների նկատմամբ ըստ բնակչության վայրի էապես տարբերվում է: Երևանում նպաստառու է տնային տնտեսությունների 9 տոկոսը, իսկ Փոքր գյուղերում՝ 26 տոկոսը: Չափազանց բարձր է Նպաստառու ընտանիքների քանակը Մեծ քաղաքներում՝ 39 տոկոս:

Գծապատկեր 1. Նպաստառուների թվաքանակը տնային տնտեսությունների նկատմամբ (տոկոս)




Արդյունքում, Նպաստառուների աշխարհագրական բաշխումը չի համապատասխանում բնակչության (տնային տնտեսությունների) բաշխմանը: Այսպես, թեև Երևանում բնակվում է տնային տնտեսությունների 36 տոկոսը, սակայն այստեղ են բնակվում բոլոր Նպաստառուների 19 տոկոսը: Մեծ քաղաքներում բնակվում են գրեթե այնքան Նպաստառուներ, որքան Երևանում, թեև այս քաղաքներում տնային տնտեսությունների քանակն ավելի քան 4 անգամ քիչ է Երևանից:

² Աղբյուրը՝ ՀՀ ԱԿԾ, 2001 թվականի մարդահամար

³ Տեքստում տնային տնտեսություններ և ընտանիք հասկացություններն օգտագործվում են նույն իմաստով:

Պճապատկեր 2. Տնային տնտեսությունների և նպաստառուների բաշխումը քաղաքներում և գյուղերում (տոկոս)




Հայաստանում տնային տնտեսությունների միջին թվաքանակը 4 մարդ է, ընդ որում խոշոր քաղաքներում (Երևան, Գյումրի, Վանաձոր) այն կազմում է 3.7 մարդ, Փոքր և միջին քաղաքներում՝ 3.9 մարդ, իսկ գյուղերում՝ 4.8 մարդ: Նպաստառու ընտանիքներում անդամների միջին թվաքանակն ավելի փոքր է՝ 3.9 մարդ: Հատկապես շեղումը մեծ է Երևանում՝ 3.3 մարդ, և փոքր գյուղերում՝ 4.4 մարդ:

Հանրապետությունում միջին տարիքը կազմում է 35.3 տարեկան: Երևանի և Մեծ քաղաքների բնակչությունը հանրապետական միջինի համեմատ ավելի ծեր է, իսկ փոքր քաղաքների և գյուղերի բնակչությունն ավելի երիտասարդ:


Նպաստառու ընտանիքները համեմատաբար երիտասարդ են՝ 32.9 տարեկան, բացառությամբ Մեծ քաղաքների, ուր նպաստառու ընտանիքների միջին տարիքը բավականին բարձր է և կազմում է 38 տարեկան:

Պճապատկեր 3. Տնային տնտեսությունների անդամների միջին քանակը և միջին տարիքը




Հանրապետության բնակչության շուրջ կեսը (46 տոկոս) 18-47 տարեկան են, իսկ երեխաները կազմում են բնակչության 25 տոկոսը (0-ից մինչև 18 տարեկաններ), ընդ որում մինչև 7 տարեկանները՝ բնակչության 7 տոկոսն են:

Գծապատկեր 4. Բնակչության կառուցվածքն ըստ տարիքային խմբերի, տոկոս ընդամենի նկատմամբ




Նպաստառու բնակչության մեջ մինչև 18 տարեկանների և 64-ից բարձր տարիքի բնակչության թվաքանակը մեծ է ընդհանուր հանրապետական ցուցանիշի նկատմամբ, այնուամենայնիվ, ընդհանուր նպաստառուների շուրջ 48 տոկոսը 18-ից մինչև 64 տարեկան են: Ընդհանուր առմամբ նպաստառու ընտանիքները երիտասարդ են՝ նաև անկախ տնային տնտեսության չափից՝ բացառությամբ 1 անդամ ունեցող ընտանիքների, որտեղ նպաստառու ընտանիքներն ավելի ծեր են:

Գծապատկեր 5. Բնակչության միջին տարիքն ըստ ընտանիքի մեծության




Տպավորություն է ստեղծվում, որ ընտանեկան նպաստը տրամադրվում է բազմանդամ և բազմազավակ ընտանիքներին և միայնակ տարեցներին: 1 անդամ ունեցող ընտանիքների շուրջ 29 տոկոսը նպաստառու է, սակայն դրանք նպաստառուների ընդամենը 18 տոկոսն են կազմում: Նպաստառու ընտանիքների միայն 14 տոկոսն ունի 7 և ավելի անդամ: Նպաստառուների 41 տոկոսը 3-5 անդամ ունեցող տնային տնտեսություններն են, թեև այս տիպի ընտանիքների միայն 11 տոկոսն են նպաստ ստանում (տե՛ս գծապատկեր 6): Նպաստառուների 38 տոկոսը 2-ից 4 անդամ ունեցող տնային տնտեսություններն են:

Գծապատկեր 6. Նպաստառուների քանակն ըստ ընտանիքի մեծության, տոկոս



Այսպիսով, ընտանիքի մեծության և Նպաստառու լինելու միջև նկատելի է որոշակի, բայց ոչ ուժեղ կապ: Գծապատկեր 5-ում նկատված Նպաստառու ընտանիքների համեմատական երիտասարդ լինելը հուշում է, որ Նպաստառու ընտանիքներում երեխաները շատ են: Սակայն գծապատկեր 7-ից պարզ է դառնում, որ Նպաստները հստակորեն չեն հասցեավորված երեխաներին և բազմազավակությանը: Այսպես, Նպաստառու ընտանիքների 33 տոկոսում երեխաներ չկան, թեև նպաստ է տրվում նման տիպի ընտանիքների ընդամենը 5 տոկոսին: Նպաստառու ընտանիքների 40 տոկոսում երեխաների քանակը 1 կամ 2 է: 4 երեխա ունեցող ընտանիքների ընդամենը 1 տոկոսին է նպաստ տրվում, իսկ 5 և ավելի երեխաներ ունեցողների՝ 0.2 տոկոսին: 4 և ավելի երեխա ունեցող Նպաստառու ընտանիքները ընդհանուր Նպաստառուների ընդամենը 8 տոկոսն են կազմում:

Գծապատկեր 7. Նպաստառուների քանակն ըստ ընտանիքում երեխաների քանակի, տոկոս




Այսպիսով, ըստ վերլուծության, ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների մեծամասնությունը չափի և տարիքի առումով նման է Հանրապետությունում ամենատարածված ընտանիքներին: Նպաստառուների մեծ մասն անդամների միջին քանակ ունեցող, 6-18 տարիքային խմբում 1-2 երեխա ունեցող ընտանիքներն են և միայնակ ապրող տարեց մարդիկ: Ընդհանուր առմամբ, ըստ հետազոտության արդյունքների, 3-18 տարեկան երեխաներից (կազմում են ընդհանուր Նպաստառու բնակչության 37 տոկոսը) բացի, այլ սոցիալական խմբեր ներկայացնող բնակչությունը Նպաստառուների ընդհանուր թվակազմում նշանակալի չի (տե՛ս հավելվածները): Դրանցից Կենսաթոշակառուներն ամենամեծն են, բայց

ըստ ստրատաների կազմում են 13-16 տոկոս, այնուհետ, Երկրորդ խմբի հաշմանդամներն են՝ 3-7 տոկոս, և Միակողմանի ծնողագուրկները՝ 3-5 տոկոս:

Աղքատության զգացումը և կարիքները

Ընդհանուր առմամբ Հայաստանում բավականին մեծ է բնակչության աղքատության զգացումը: Տնային տնտեսությունների շուրջ 40 տոկոսն իրենց համարել են աղքատ, ընդ որում 10 տոկոսը ծայրահեղ աղքատ: Հարցազրուցավարների գնահատականներն էապես չեն տարբերվում: Ընդհանուր առմամբ այս արդյունքները բավականին տրամաբանական են և որպես սուբյեկտիվ գնահատականներ շատ հեռու չեն աղքատության պաշտոնական տվյալներից: Ուշագրավ են Նպաստառու ընտանիքների աղքատության գնահատականները: Այս ընտանիքների 21 տոկոսն իրենց աղքատ չեն համարել, իսկ 1.3 տոկոսը համարել են իրենց նույնիսկ ապահովված: Այնուհանդերձ, Նպաստառու ընտանիքների 31 տոկոսն իրենց համարել են ծայրահեղ աղքատ, իսկ 47 տոկոսը՝ աղքատ:

Գծապատկեր 8. Աղքատության սուբյեկտիվ գնահատականները, տոկոս ընդամենը ընտանիքների նկատմամբ




Հետազոտությունում աղքատության գնահատման մեկ այլ ցուցանիշ է տնային տնտեսությունների գնահատականներն իրենց մեկ շնչի հաշվով սպառողական ընթացիկ ծախսերի վերաբերյալ: Ըստ այդմ, Հայաստանի տնային տնտեսությունների 54 տոկոսն աղքատության ընդհանուր գծից⁴ քիչ է ծախսում, այսինքն՝ աղքատ են և/կամ ծայրահեղ աղքատ: Այս ցուցանիշը, հաշվի առնելով հետազոտությունում ընդգրկված տնային տնտեսությունների եկամուտների, ծախսերի, ակտիվների ձեռքբերման և խնայման հակմանը վերաբերող ստուգիչ փոփոխականները, ճշգրտվել է: Արդյունքում, ըստ հետազոտության, Հանրապետության տնային տնտեսությունների 45 տոկոսն աղքատ և/կամ ծայրահեղ աղքատ է: Ընդ որում, այս ցուցանիշն ամենաբարձրն է Փոքր գյուղերում՝ 67 տոկոս, և Փոքր ու միջին քաղաքներում՝ 54 տոկոս:

Գնահատվել է, որ Նպաստառու ընտանիքների մոտ 26 տոկոսն ավելի շատ է ծախսում, քան աղքատության ընդհանուր գիծն է, այսինքն՝ աղքատ չեն: Այս ցուցանիշը Երևանում կազմում է 37 տոկոս, Մեծ քաղաքներում՝ 32 տոկոս, իսկ գյուղերում՝ 21 տոկոս (տե՛ս գծապատկեր 9):


⁴ Որպես աղքատության ընդհանուր գծի ցուցանիշ վերցված է մեկ շնչի հաշվով ամսական 20000 դրամը: ՀՀ ԱՎԾ 2005 թվականի ՏՏԿԱՀ-ում աղքատության ընդհանուր գիծը վերցված է ամսական 20289 դրամ:

Գծապատկեր 9. Մեկ շնչի հաշվով 20000 դրամից քիչ ընթացիկ ծախսեր կատարող տնտեսությունները




Բնակարանային պայմանները Հայաստանում այնքան էլ վատ չեն՝ տնային տնտեսությունների հիմնական մասը բնակվում են իրենց սեփական բնակարաններում: Սեփական բնակարանի կարիք ունեցողների թվաքանակը Հայաստանում փոքր է 10 տոկոսից: Խնդիրը սուր է Նպաստառու ընտանիքների 12 և իրենց աղքատ համարած ընտանիքների 6 տոկոսի մոտ, քանի որ այս ընտանիքներն ապրում են վթարային և ոչ հիմնական շինություններում և հանրակացարաններում:

Գծապատկեր 10. Բնակարանային կարիքները




Աղքատ տնային տնտեսությունների շուրջ 67 տոկոսում վերջին 6 տարիների ընթացքում ակտիվների ավելացում չի եղել (գույք և կենցաղային սարքեր): Այս ցուցանիշը հատկապես վատ է Երևանում՝ 75 տոկոս:

Գծապատկեր 11. 2005 թվականից հետո գույքի և կենցաղային սարքերի գնումներն իրենց աղքատ համարող տնային տնտեսություններում



Ընդհանուր առմամբ, Հայաստանի տնային տնտեսությունների մոտ 27 տոկոսում կան քրոնիկ հիվանդներ և մշտական բժշկական ինսամքի կարիք ունեցող անձինք: Նպաստառու ընտանիքներում այս ցուցանիշը հասնում է մոտ 30 տոկոսի: Բոլոր տնային տնտեսությունների 20 և Նպաստառուների 25 տոկոսը անցած տարվա ընթացքում հիվանդությունների դեպքում բժշկի չեն դիմել: Ֆինանսական դժվարությունների պատճառով բժշկի չեն դիմել Նպաստառու ընտանիքների 12 տոկոսը:

Գծապատկեր 12. Առողջապահական կարիքները




Սոցիալական ծառայությունները

Հայաստանում ընտանիքների 75 տոկոսը, սեփական գնահատմամբ, կարիք ունեն պետության կողմից սոցիալական աջակցության կամ սոցիալական ծառայությունների ստացման: Հատկապես ցանկությունը մեծ է գյուղական բնակավայրերում՝ շուրջ 87 տոկոս, ընդ որում, Փոքր գյուղերում այն կազմում է 94 տոկոս: Համեմատաբար փոքր է ցանկությունը քաղաքներում, որտեղ ընտանիքների 25 տոկոսը պետության կողմից որևէ սոցիալական աջակցություն ստանալու ցանկություն չունի, իսկ Երևանում նման ցանկություն չունի ընտանիքների 37 տոկոսը:

Պատկերը փոքր-ինչ այլ է իրենց աղքատ համարող ընտանիքների և Նպաստառու ընտանիքների մոտ: Իրենց աղքատ համարած ընտանիքների, հատկապես գյուղաբնակ, 91 տոկոսը կարիք ունի պետության կողմից սոցիալապես անապահովությունների ստացման: Նպաստառու ընտանիքների 93 տոկոսն են արտահայտել այդ կարիքը, այսինքն՝ մնացած 7 տոկոսը թեև ստանում են պետության սոցիալական աջակցությունը (2006-ի ապրիլի դրությամբ Նպաստառու են եղել), փաստորեն խոստովանել են, որ դրա կարիքը չունեն:

Գծապատկեր 14. Պետության կողմից աջակցության կամ սոցիալական ծառայությունների ստացման կարիք ունեցող տնային տնտեսությունները



Հիմնվելով տնային տնտեսությունների կողմից սոցիալական ծառայության որևէ տեսակի ստացման կարիքի կամ պահանջվածության գնահատականների վրա՝ սոցիալական ծառայությունների տեսակները դասակարգվել են ըստ առաջնահերթությունների:

Սոցիալական ծառայությունների առաջնահերթությունները

N	Սոցիալական ծառայության տեսակը	Ամբողջ բնակչության համար	Նպաստառուների համար
1	Դրամական օգնության՝ նպաստների ստացում	1	1
2	Ոչ մեծ գումարի վարկ՝ փոքր կամ միկրո բիզնեսի համար	3	2
3	Մթերքի կամ արտոնությունների տրամադրում	2	3
4	Տնային պայմաններում ծերերի խնամք	5	4
5	Ծերանոցներում ծերերի խնամք	6	6
6	Երեխաների շուրջօրյա խնամք	4	8
7	Ժամանակավոր օթևանի տրամադրում	7	7
8	Հաշմանդամների հոգեբանական ծառայությունների տրամադրում	8	5
9	Հաշմանդամների բժշկական և վերականգնողական ծառայությունների տրամադրում	9	9
10	Իրավաբանական օգնություն	10	11
11	Սոցիալական ծառայությունների ստացման մասին խորհրդատվություն	11	10

Ինչպես երևում է ստացված արդյունքներից, բնակչությունն ամենաշատը կարևորել է «Դրամական օգնության և նպաստների ստացումը», որը բոլոր խավերի մարդկանց համար գնահատվել է թիվ 1 կարևոր ծառայությունը:


Հաջորդ կարևորվածը «Մթերքի կամ արտոնությունների տրամադրում» ծառայությունն է, որը փոքր-ինչ քիչ է կարևորված ցածր եկամուտներ ունեցողների, այդ թվում՝ Նպաստառուների շրջանակներում: Նպաստառուները փոխարենն առավել կարևորել են «Ոչ մեծ գումարի վարկ՝ փոքր կամ միկրո բիզնեսի համար» ծառայությունը:

Նպաստառու ընտանիքներն ավելի քիչ են կարևորում «Երեխաների շուրջօրյա խնամք» ծառայությունը, քան «Հաշմանդամների հոգեբանական ծառայությունների տրամադրումը», որը խոսում է այն մասին, որ այս խավում գտնվող տնային տնտեսություններում գերակշռում են հաշմանդամները և վերջինների համար բավականին կարևորվում է նմանատիպ ծառայության մատուցումը: Բնակչության համար ամենանվազ կարևորվածը «Իրավաբանական օգնություն» և «Սոցիալական ծառայությունների ստացման մասին խորհրդատվություն» ծառայություններն են:

Ընտանեկան նպաստի համակարգը


Պետք է նշել, որ Ընտանեկան նպաստների համակարգը ներկայում հանդիսանում է բավականին մեծ հնչեղություն վայելող պետական ծրագրերից մեկը: Այս իրողությունն ապացուցվում է հետազոտությամբ ստացված տվյալներով: Ծրագրի մասին տեղյակ են հանրապետության տնային տնտեսությունների 90.3 տոկոսը, տեղեկացվածությունը համեմատաբար ցածր է Երևանում (82 տոկոս): Մյուս քաղաքներում այս ցուցանիշը կազմում է 97 տոկոս, ինչը բացատրվում է այս համայնքներում Նպաստառու ընտանիքների մեծ թվով, ցուցանիշը բարձր է նաև գյուղական վայրերում (93 տոկոս):

Գծապատկեր 15. Տեղեկացվածությունն աղքատության ընտանեկան նպաստների մասին




Համաձայն հետազոտության, տնային տնտեսությունների միայն 46 տոկոսն է, որ ոչ մի առևտրություն չի ունեցել ընտանեկան նպաստի համակարգի հետ: Տնային տնտեսությունների 11 տոկոսը նախկինում ներգրավված են եղել համակարգում և ստացել են նպաստներ: Համակարգի հասցեականության բարձրացման արդյունքում վերջին տարիներին շատերը զրկվել են նպաստի իրավունքից:

Պճապատ 16. Ընդգրկվածությունն աղքատության ընտանեկան նպաստների համակարգում



Համաձայն հետազոտության, ներկայում համակարգում հաշվառված է տնային տնտեսությունների 24.6 տոկոսը, ինչը համընկնում է վարչական տվյալների հետ: Հաշվառված ընտանիքների շուրջ 8 տոկոսի բալերը չեն բավականացրել նպաստի իրավունք ստանալու համար, իսկ 1.4 տոկոսը ստացել է միանվագ դրամական օժանդակություն: Նպաստառու է ընտանիքների շուրջ 15 տոկոսը: Այս պարագայում առկա է որոշակի շեղում վարչական տվյալներից, որի համաձայն նպաստ է ստանում ընտանիքների 16.5 տոկոսը: Շեղումը հիմնականում բացատրվում է ընտանիքների կողմից իրենց նպաստառու լինելու հանգամանքը թաքցնելով, ինչին ականատես են եղել նաև ՏՀՀԿ վերահսկիչները՝ դաշտային աշխատանքները վերահսկելիս: Շեղումը հատկապես մեծ է Մեծ քաղաքներում և Փոքր գյուղերում:

Պճապատկեր 17. Նպաստառու տնային տնտեսությունների հարաբերկցությունն ընդամենի նկատմամբ



Հանրապետությունում Ընտանեկան նպաստի համակարգի արդարության մասին տնային տնտեսությունների կարծիքները գրեթե հավասարապես կիսվում են՝ շուրջ մեկ երրորդը գտնում է, որ համակարգն արդար է, մյուս մեկ երրորդը գտնում է՝ արդար չէ, իսկ մնացածը (փոքր-ինչ ավելի մեծ մասը) դժվարանում են պատասխանել: Այսինքն արդարության հստակ գնահատական հանրապետությունը չկա: Թեև, եթե դիտարկենք միայն Մեծ քաղաքները, ապա մեծամասնությունը (տնային տնտեսությունների շուրջ 68 տոկոսը) կարծում է, որ համակարգը արդար չէ:


Չամակարգի արդարության մասին առավել դրական են հենց Նպաստառուների կարծիքները՝ նրանց շուրջ կեսը համոզված են համակարգի արդարացիության մեջ և միայն 19 տոկոսն են համակարգը համարել անարդար (տե՛ս վիճակագրական հավելվածները):

Չնայած արդարության գնահատականներին, այնուամենայնիվ, տնային տնտեսությունների 34 տոկոսի կարծիքով նպաստառուների կեսից շատը կարիքավոր չեն, իսկ Մեծ քաղաքներում այս ցուցանիշը կազմում է շուրջ 50 տոկոս:

Նպաստների մերժման կամ դադարեցման պատճառները հիմնականում բնակչությանը հայտնվում է բանավոր կերպով, սակայն առկա են նաև պատճառների մասին ընդհանրապես չտեղեկացման դեպքեր, ինչը համեմատաբար բարձր է Երևանում:

Մերժման կամ դադարեցման պատճառները միշտ չէ, որ հասկանալի են լինում: Միայն մերժվածների կեսին է հասկանալի մերժման պատճառները:

Գծապատկեր 18. Ընտանեկան նպաստ ստացողների իրականում կարիքավոր լինելու վերաբերյալ տնային տնտեսությունների կողմից տրված գնահատականները



Նպաստառուների 29 տոկոսի կարծիքով բավականին դժվար է փաստաթղթերի հավաքումը, ընդ որում Երևանում այս կարծիքին են Նպաստառու ընտանիքների 39 տոկոսը, իսկ Փոքր գյուղերում՝ միայն 5 տոկոսը: Այս իրողությունը կարող է խոսել բյուրոկրատայի հնարավոր տարբերությունների մասին:

Հավելված 1. Համընդհանուր հետազոտություն վիճակագրական տվյալներ

Բովանդակություն

Բաժին Ա. Հիմնական ժողովրդագրական պատկերը	23
Աղյուսակ 1. Տնային տնտեսություններն ըստ անդամների թվաքանակի.....	23
Աղյուսակ 2. Տնային տնտեսությունների բաշխումը ստրատաներում ըստ անդամների թվաքանակի.....	23
Աղյուսակ 3. Բնակչության տարիքային կառուցվածքը	23
Աղյուսակ 4. Բնակչության տարիքային խմբերի բաշխումն ըստ ստրատաների.....	23
Աղյուսակ 5. Տղամարդկանց և կանանց տարիքային կառուցվածքը.....	24
Աղյուսակ 6. Բնակչության սեռատարիքային կառուցվածքը	24
Աղյուսակ 7. Սոցիալական առանձին խմբերին պատկանող բնակչությունը.....	24
Աղյուսակ 8. Սոցիալական առանձին խմբերին պատկանող բնակչության բաշխումն ըստ ստրատաների.....	25
Բաժին Բ. Կրթությունը և զբաղվածությունը	25
Աղյուսակ 9. 18 տարին լրացած բնակչության կրթական մակարդակը.....	25
Աղյուսակ 10. Ըստ կրթական մակարդակի 18 տարին լրացած բնակչության բաշխումը ստրատաներում	25
Աղյուսակ 11. Երեխաների ուսումնական հաստատություններ հաճախումը	26
Աղյուսակ 12. Համակարգչի առկայությունը տնային տնտեսություններում.....	26
Աղյուսակ 13. 18-63 տարեկան բնակչության զբաղվածության կառուցվածքը.....	26
Աղյուսակ 14. 18-63 տարեկան բնակչության բաշխումը ստրատաներում ըստ զբաղվածության տեսակի	26
Բաժին Գ. Առողջապահություն	27
Աղյուսակ 15. Առողջապահական խնդիրների առկայությունը.....	27
Աղյուսակ 16. Առողջապահական խնդիրներ ունեցողների բաշխումը ստրատաներում	27
Բաժին Դ. Բնակչության բնակարանային պայմանները և կոմունալ հարմարությունները.....	27
Աղյուսակ 17. Տնային տնտեսությունների բնակարանների սեփականությունը	27
Աղյուսակ 18. Տնային տնտեսությունների բաշխումը ստրատաներում ըստ բնակարանների սեփականության.....	28
Աղյուսակ 19. Կոմունալ հարմարություններ չունեցող տնային տնտեսությունները	28
Աղյուսակ 20. Կոմունալ հարմարություններ չունեցող տնային տնտեսությունների բաշխումը	28
Բաժին Ե. Ընտանեկան նպաստների համակարգը.....	29
Աղյուսակ 21. Տեղեկացվածությունն ընտանեկան նպաստների մասին	29
Աղյուսակ 22. Ընտանեկան նպաստների համակարգում հաշվառվածները	29
Աղյուսակ 23. Ընտանեկան նպաստների համակարգում հաշվառվածներն ըստ ստրատաների	29
Աղյուսակ 24. Ընտանեկան նպաստների համակարգում չհաշվառման պատճառները	29
Աղյուսակ 25. Նպաստի մերժման որոշման մասին բնակչության տեղեկացումը	30
Աղյուսակ 26. Մերժման պատճառների ընկալումը բնակչության կողմից	30
Աղյուսակ 27. Հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթերի հավաքումը	30
Աղյուսակ 28. Սոցիալական տեսուչների աշխատանքի գնահատումը.....	30
Աղյուսակ 29. Ընտանեկան նպաստների համակարգի արադարացիության գնահատականները.....	30
Աղյուսակ 30. Նպաստ ստացողների իրական կարիքավորության գնահատականները.....	30
Բաժին 2. Գյուղատնտեսություն	31
Աղյուսակ 31. Սեփական հողատարածք, այգի կամ այլ գյուղ. նշանակության հողատեսք ունեցող տնային տնտեսությունները.....	31
Աղյուսակ 32. Սեփական հողատարածք, այգի կամ այլ գյուղ. նշանակության հողատեսք ունեցող տնային տնտեսությունների բաշխումը ստրատաներում.....	31
Աղյուսակ 33. Հողատեսքերի տեսակները, մասնատվածությունը և ոռոգման առկայությունը	31
Աղյուսակ 34. Հողատեսքերի մշակումը	31
Աղյուսակ 35. Հողերի չմշակման հիմնական պատճառները.....	32
Աղյուսակ 36. Մթերատու կենդանիների առկայությունը գյուղական բնակավայրերում.....	32
Աղյուսակ 37. Մթերատու կենդանիների հիմնական տեսակների առկայությունը գյուղական բնակավայրերում.....	32

Բաժին Ա. Հիմնական ժողովրդագրական պատկերը

Աղյուսակ 1. Տնային տնտեսություններն ըստ անդամների թվաքանակի

Անդամների քանակը	Ընդամենը	Երևան	Այլ քաղաքներ	Մեծ քաղաքներ	Փոքր ու միջին քաղաքներ	Գյուղեր	Մեծ և միջին գյուղեր	Փոքր գյուղեր
1 անդամ	9%	12%	11%	12%	11%	5%	5%	6%
2 անդամ	14%	18%	15%	17%	14%	10%	10%	11%
3 անդամ	14%	17%	16%	17%	15%	9%	9%	7%
4 անդամ	22%	23%	22%	24%	22%	20%	20%	11%
5 անդամ	19%	16%	19%	18%	19%	21%	21%	26%
6 անդամ	13%	8%	10%	7%	10%	20%	20%	24%
7 և ավել անդամ	9%	6%	7%	5%	8%	16%	16%	15%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%

Աղյուսակ 2. Տնային տնտեսությունների բաշխումը ստրատաներում ըստ անդամների թվաքանակի

Անդամների քանակը	Ընդամենը	Երևան	Այլ քաղաքներ	Մեծ քաղաքներ	Փոքր ու միջին քաղաքներ	Գյուղեր	Մեծ և միջին գյուղեր	Փոքր գյուղեր
1 անդամ	100%	45%	38%	11%	27%	17%	16%	1%
2 անդամ	100%	45%	32%	10%	23%	23%	21%	2%
3 անդամ	100%	43%	35%	10%	25%	22%	20%	1%
4 անդամ	100%	38%	32%	9%	23%	30%	29%	1%
5 անդամ	100%	32%	32%	8%	24%	37%	34%	3%
6 անդամ	100%	24%	24%	5%	19%	52%	48%	4%
7 և ավել անդամ	100%	22%	24%	5%	19%	55%	51%	4%

Աղյուսակ 3. Բնակչության տարիքային կառուցվածքը

Տարիքային խմբեր	Ընդամենը	Երևան	Այլ քաղաքներ	Մեծ քաղաքներ	Փոքր ու միջին քաղաքներ	Գյուղեր	Մեծ և միջին գյուղեր	Փոքր գյուղեր
0-2 տարեկաններ	2.9%	2.5%	3.1%	2.3%	3.4%	3.0%	2.9%	4.0%
3-5 տարեկաններ	4.3%	4.0%	4.0%	2.4%	4.5%	4.9%	4.8%	6.5%
6-17 տարեկաններ	17.5%	14.7%	16.5%	16.3%	16.6%	20.6%	20.6%	20.4%
18-47 տարեկաններ	45.6%	45.1%	47.0%	45.9%	47.3%	45.0%	45.0%	44.0%
48-63 տարեկաններ	16.6%	19.0%	18.7%	19.3%	18.4%	13.0%	13.0%	12.9%
64-74 տարեկաններ	8.7%	9.9%	7.7%	9.7%	7.0%	8.5%	8.6%	7.0%
75 և բարձր տարեկաններ	4.4%	4.7%	3.2%	4.0%	2.9%	5.1%	5.0%	5.2%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%

Աղյուսակ 4. Բնակչության տարիքային խմբերի բաշխումն ըստ ստրատաների

Տարիքային խմբեր	Ընդամենը	Երևան	Այլ քաղաքներ	Մեծ քաղաքներ	Փոքր ու միջին քաղաքներ	Գյուղեր	Մեծ և միջին գյուղեր	Փոքր գյուղեր
0-2 տարեկաններ	100.0%	27.8%	31.8%	6.1%	25.8%	40.4%	36.8%	3.6%
3-5 տարեկաններ	100.0%	29.6%	26.9%	4.2%	22.8%	43.5%	39.6%	3.9%
6-17 տարեկաններ	100.0%	26.9%	27.8%	6.9%	20.8%	45.3%	42.3%	3.0%
18-47 տարեկաններ	100.0%	31.8%	30.3%	7.5%	22.8%	37.9%	35.4%	2.5%
48-63 տարեկաններ	100.0%	36.8%	33.1%	8.6%	24.5%	30.0%	28.0%	2.0%
64-74 տարեկաններ	100.0%	36.7%	25.9%	8.3%	17.6%	37.4%	35.3%	2.1%
75 և բարձր տարեկաններ	100.0%	34.6%	21.1%	6.7%	14.4%	44.3%	41.2%	3.1%

Աղյուսակ 5. Տղամարդկանց և կանանց տարիքային կառուցվածքը

Սեռատարիքային խմբեր	Ընդամենը	Երևան	Այլ քաղաքներ	Մեծ քաղաքներ	Փոքր ու միջին քաղաքներ	Գյուղեր	Մեծ և միջին գյուղեր	Փոքր գյուղեր
Արական	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%
0-17 տարեկաններ	26.7%	23.3%	26.0%	21.7%	27.4%	29.9%	29.9%	30.5%
18-47 տարեկաններ	46.6%	46.3%	48.0%	49.1%	47.6%	45.7%	45.5%	48.7%
48-63 տարեկաններ	15.4%	17.7%	16.6%	17.5%	16.3%	12.8%	12.8%	12.2%
64 և բարձր	11.3%	12.7%	9.4%	11.8%	8.6%	11.6%	11.8%	8.6%
Իգական	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%
0-17 տարեկաններ	22.9%	19.4%	21.3%	20.6%	21.6%	27.3%	27.0%	31.2%
18-47 տարեկաններ	44.8%	44.2%	46.0%	43.0%	47.1%	44.3%	44.7%	39.5%
48-63 տարեկաններ	17.6%	20.1%	20.5%	20.9%	20.4%	13.1%	13.1%	13.7%
64 և բարձր	14.7%	16.3%	12.1%	15.5%	10.9%	15.3%	15.3%	15.6%

Աղյուսակ 6. Բնակչության սեռատարիքային կառուցվածքը

Սեռատարիքային խմբեր	Ընդամենը	Երևան	Այլ քաղաքներ	Մեծ քաղաքներ	Փոքր ու միջին քաղաքներ	Գյուղեր	Մեծ և միջին գյուղեր	Փոքր գյուղեր
Արական	47.4%	45.3%	48.1%	47.3%	48.4%	48.6%	48.6%	49.0%
0-17 տարեկաններ	12.7%	10.5%	12.5%	10.3%	13.3%	14.5%	14.5%	14.9%
18-47 տարեկաններ	22.1%	21.0%	23.1%	23.2%	23.0%	22.2%	22.1%	23.9%
48-63 տարեկաններ	7.3%	8.0%	8.0%	8.3%	7.9%	6.2%	6.2%	6.0%
64 և բարձր	5.4%	5.8%	4.5%	5.6%	4.2%	5.6%	5.8%	4.2%
Իգական	52.6%	54.7%	51.9%	52.7%	51.6%	51.4%	51.4%	51.0%
0-17 տարեկաններ	12.1%	10.6%	11.1%	10.9%	11.1%	14.0%	13.9%	15.9%
18-47 տարեկաններ	23.5%	24.2%	23.9%	22.7%	24.3%	22.8%	23.0%	20.1%
48-63 տարեկաններ	9.3%	11.0%	10.7%	11.0%	10.5%	6.7%	6.7%	7.0%
64 և բարձր	7.7%	8.9%	6.3%	8.2%	5.6%	7.9%	7.9%	8.0%

Աղյուսակ 7. Սոցիալական առանձին խմբերի պատկանող բնակչությունն (ընդհանուր բնակչության նկատմամբ)

Սոցիալական խմբերը	Ընդամենը	Երևան	Այլ քաղաքներ	Մեծ քաղաքներ	Փոքր ու միջին քաղաքներ	Գյուղեր	Մեծ և միջին գյուղեր	Փոքր գյուղեր
Կենսաթոշակառու	13.9%	15.6%	11.3%	13.5%	10.6%	14.4%	14.6%	12.2%
Միայնակ կենսաթոշակառու	0.8%	1.0%	1.1%	1.3%	1.0%	0.5%	0.4%	0.7%
I խմբի հաշմանդամ	0.6%	0.6%	0.5%	0.7%	0.4%	0.6%	0.6%	0.7%
II խմբի հաշմանդամ	2.5%	2.9%	2.9%	2.7%	2.9%	2.0%	2.0%	1.5%
III խմբի հաշմանդամ	0.9%	1.0%	1.1%	1.1%	1.1%	0.7%	0.7%	0.2%
Հաշմանդամ երեխա	0.2%	0.1%	0.2%	0.3%	0.2%	0.3%	0.3%	0.0%
Հղի կին (20 շաբաթ և ավելի)	0.3%	0.3%	0.3%	0.3%	0.3%	0.3%	0.3%	0.0%
Միակողմանի ծնողագուրկ (մինչև 21 տարեկան)	0.9%	0.7%	1.3%	1.0%	1.4%	0.9%	0.9%	0.7%
Երկկողմանի ծնողագուրկ (մինչև 21 տարեկան)	0.0%	0.1%	0.0%	0.1%	0.0%	0.0%	0.0%	0.0%
Ամուսնալուծված ընտանիքի կամ միայնակ մոր երեխա	0.7%	1.1%	0.9%	2.2%	0.5%	0.2%	0.2%	0.0%

Աղյուսակ 8. Սոցիալական առանձին խմբերին պատկանող բնակչության բաշխումն ըստ ստրատաների

Սոցիալական խմբերը	Ընդամենը	Երևան	Այլ քաղաքներ	Մեծ քաղաքներ	Փոքր ու միջին քաղաքներ	Գյուղեր	Մեծ և միջին գյուղեր	Փոքր գյուղեր
Կենսաթոշակառու	100.0%	36.1%	24.0%	7.2%	16.8%	39.9%	37.7%	2.3%
Միայնակ կենսաթոշակառու	100.0%	39.0%	39.0%	12.2%	26.8%	22.0%	19.5%	2.4%
I խմբի հաշմանդամ	100.0%	34.1%	26.1%	9.1%	17.0%	39.8%	36.4%	3.4%
